«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հայեցի կրթությունը Սփյուռքի հայկական կրթօջախներում

Հետազոտող ուսուցիչ՝ Սահակյան Վարդանուշ(Երևան քաղաքի <<Հայ կրթություն>>կրթական հիմնադրամի կրթահամալիր

ԵՐԵՎԱՆ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ..... 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ՝ ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....5

1.1 Սփյուռքում գործող հայագիտական կենտրոններն ու դրանց նշանակությունը

1.2 Հայկական դպրոցների, մշակութային օջախների գործունեությունը հայկական սփյուռքում 8

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ.....14

2.1 Հայրենիք-սփյուռք համագործակցությունը կրթամշակութային ոլորտում.....

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 17

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ.....18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

ՀԱՎԵԼՎԱԾ 1,2..... 20-22

Առաջարկություններ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս աշխատությունը նպատակ ունի անդրադառնալ հայկական սփյուռքին, հայկական գաղթօջախների դերին ու նշանակությանը՝ որպես հայականության պահպանման, հայեցի կրթության ու դաստիարակության առանցքային դերակատարի՝ մայր հայրենիքի սահմաններից դուրս: Աշխատանքում շեշտադրվել են մի շարք հայկական գաղթօջախներում գործունեություն ծավալող կրթամշակութային կենտրոնների կենսական նշանակությունը հայոց լեզվի, ազգային ավանդույթների ու մշակույթի զարգացման, պահպանման հիմնահարցերի լուծման տեսանկյունից, քանզի օտար ափերում նման կրթօջախների, կազմակերպությունների, նաև եկեղեցու դերն ուղղակի անփոխարինելի է հայեցի կրթության ու դաստիարակության հարցում: Անդրադարձ է կատարվել Կալկաթայի **<<**Հայոց մարդասիրական**>>** ճեմարանի, դերը կարևորելու մասին՝ սփյուռքում հայականության պահպանման և փոխանցման հսկայածավալ գործում:

Հետազոտական աշխատանքի **արդիականությունը**: Օտար ափերում հայ մնալու, սերունդներին ազգային ոգով դաստիարակելու և հայկական կրթություն տալու համար հայկական սփյուռքը ջանք ու եռանդ չի խնայել՝ ամեն կերպ փորձելով չտարալուծվել օտարության ճիրաններում: Օտար ափերում հայեցի կրթության, ազգային արժեհամակարգի և դիմագծի պահպանման ու փոխանցման այսօրեական անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է սույն հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայկական սփյուռքում հայեցի կրթության ու դաստիարակության պատմությունը, այդ ընթացքում ձևավորված ավանդույթները, հայեցի կրթության ներկա վիճակը, առկա հիմնախնդիրները և դրանց կառավարման մեխանիզմները, անդրադարձ կատարել սփյուռքյան մի շարք հայկական կրթամշակութային օջախների, համայնքային նշանակության և եկեղեցական

ենթակառուցվածքների, հայագիտական կենտրոնների գործունեությանը, որոնց հիմնական նպատակն է մատաղ սերդի հայեցի կրթությունն ու հայականության պրոպագանդան աշխարհում:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտը հայկական սփյուռքում հայեցի կրթության հիմնահարցն է:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկա է հանդիսանում աշխարհի հայկական գաղթօջախներում հայեցի դաստիարակության, ազգային արժեքների ու մշակույթի պահպանման ու զարգացմանն ուղղված մերօրյա գործիքակազմերը:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության շրջանակներում կիրառվել են վերլուծական, համեմատական, մեկնաբանման և պատմական մեթոդները:

Հետազոտության կառուցվածքը: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՍՓՅՈՒՌՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ՝ ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Սփյուռքում գործող հայագիտական կենտրոններն ու դրանց նշանակությունը

Սփյուռքի ձևավորումից ի վեր նրա օրակարգի առանցքային խնդիրներից է եղել օտար միջավայրում ազգային նկարագրի պահպանումը: Դրան սպառնացող մարտահրավերին դիմագրավման արդյունավետ ուղիներից են հայոց լեզվի, պատմության, մշակույթի, գրականության, հայկական խնդիրների ուսումնասիրությունը և քարոզչությունը, ինչին էլ լծված են Սփյուռքի հայագիտական կենտրոնները: Եթե ամփոփենք Սփյուռքում գործող հայագիտական կենտրոններն ու դրանց նշանակությունը, կարելի է փաստել, որ շուրջ մեկդարյա պատմության ընթացքում աշխարհով մեկ սփռված սփյուռքահայության ջանքերով ահռելի գործ է կատարվել հայագիտության զարգացման ու պրոպագանդայի համար: Ներկայիս աշխարհի մարտահրավերներին դիմակայելու, մեր ազգային արժեքները սփյուռքում պահպանելու տեսանկյունից աշխարհով մեկ սփռված հայագիտական կառույցներն իրենց անփոխարինելի դերակատարումն են ունեցել և շարունակում են ունենալ: Մայր հայրենիքից դուրս հայագիտության զարգացմանն էապես նպաստեց հայկական սփյուռքը: Սփյուռքի հայագիտական կենտրոնները, ունենալով ընդհանուր հայագիտական թեմատիկ ուղղվածություն, այլ հատկանիշներով տարբերվել են միմյանցից: Եվրոպայում հայագիտությունն ունի խոր արմատներ և ավանդույթներ: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում Եվրոպայի երկրներում ակադեմիական և վանական հաստատություններում գործել են հայագիտական հեղինակավոր կենտրոններ: Հայագիտության զարգացումն այստեղ, ինչպես նշում են մի շարք հեղինակներ, համընկավ եվրոպական լուսավորության և դրանից հետո ընկած ժամանակաշրջանների հետ, որտեղ իր ուրույն տեղն ունի Մխիթարյան միաբանությունը: Միաբանության հայագիտական գործունեությամբ պայմանավորված՝ Եվրոպայում էլ ավելի մեծ

հետաքրքրություն առաջացավ հայոց լեզվի և պատմության հանդեպ: Ձևայած հայագիտությունը Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Անգլիայում մեծ հետաքրքրություն էր առաջացրել, այդուհանդերձ, երկար տարիներ Եվրոպայում, որպես եզակի հայագիտական կենտրոններ, մնում են Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունները: Մինչև Մխիթարյան միաբանութեան հիմնադրումը Մխիթար Սեբաստացին դպրոցներ է բացել տարբեր հայաբնակ քաղաքներում: Աշխարհի տարբեր մասերում 1736 թվականից մինչ մեր օրերը գործել է շուրջ 100 Մխիթարյան վարժարան:

Մխիթար Սեբաստացու գերմարդկային ջանքերով ու աստվածատուր հանճարով Վենետիկի Սուրբ Ղազար կղզին դարձավ լուսավորության փարոս, որն իր ճառագայթները հասցրեց աշխարհի բոլոր այն վայրերը, ուր հայեր էին ապրում: Եկեղեցական, հասարակական ու մշակութային գործիչ, հայագետ, բնագետ, թարգմանիչ ու մանկավարժ Մխիթար Սեբաստացին 1701 թվականին Կ. Պոլսում հիմնել է, հետագայում իր անունով կոչված, Մխիթարյան միաբանությունը: Հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության հոլովույթում նախադեպը չունեցող այդ կառույցի նպատակը հայոց պետության բացակայության պայմաններում հոգևոր, ուսումնական, կրթական, գիտական, թարգմանական, հրատարակչական և մշակութային գործունեություն ծավալելն էր: 1717 թ. հիշյալ միաբանությունը հաստատվել է Եվրոպայի կենտրոնում՝ Վենետիկին մերձ Սուրբ Ղազար կղզում, ուր և գործում է առ այսօր : Մխիթարյանների գործունեությանն անդրադարձել է նաև Լեոն. «Մի անօրինակ բեղմնավոր գրական գործունեությամբ Սբ. Ղազարի վանքը դարձավ մի երևույթ, որի նմանը չէր տեսել մեր պատմությունը: Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի գրականությունը, բայց ոչ մի տեղ չկարողացան հավասարվել Վենետիկի հայ կրոնավորներին, որոնք երկար ժամանակ անհաղթելի և աննկուն տիտանների նման էին երևում ազգի աչքին» : Միաբանությունն իր գործունեության ընթացքում հրատարակել է բազմաթիվ հայագիտական-բանասիրական, կրոնական և

գիտական այլ աշխատություններ: Մխիթարի և նրա առաջին աշակերտների հավատամքն էր. «ազգը չգոհել կրոնին և կրոնը՝ ազգությանը»: Եվրոպական այլ երկրներում հայագիտությամբ զբաղվող համալսարանական ամբիոններն ու բաժիններն են՝

- Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգայինինստիտուտի Հայագիտության բաժին(Ֆրանսիա)
- Պրովանսի համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոն (Ֆրանսիա)
- ՎենետիկիԿա-Ֆոսկարի անվան համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոն (Իտալիա)
- Բոլոնիայի համալսարանի Բանասիրության ֆակուլտետի Հայագիտության ամբիոն(Իտալիա)
- Օքսֆորդի համալսարանի Գալուստ Գյուլբենկյանի անվան Հայագիտության ամբիոն (ՄեծԲրիտանիա)
- Լուվենի Կաթոլիկ համալսարանի Հայագիտության բաժին(Բելգիա)
- Զալցբուրգի համալսարանի Հայագիտության բաժին(Ավստրիա) և այլն:

Հայագիտության զարգացման ու տարածման գործում մեծ ավանդ են ունեցել և շարունակում են իրենց նպաստը բերել ԱՄՆ-ում գործող հայկական գիտահետազոտական կենտրոնները, որոնք առանցքային նշանակություն ունեն:

1.2Հայկական դպրոցների, մշակութային օջախների գործունեությունը հայկական սփյուռքում

Հայ ազգային ինքնության պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու և դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից դարձնելու ձգտումն ու ազգային արժեհամակարգի կարևորումը մշտապես եղել և մնում են մեր հնագույն ժողովրդի ազգային հոգեկերտվածքի կարևորագույն բաղկացուցիչ մասը: Դարեր շարունակ պետականությունից զուրկ ապրելը, օտար տիրապետողների ծանր լուծը և ազգային ինքնության ու գենի կորստի մշտական սպառնալիքն հայ ժողովրդի ազգային գիտակցության մեջ առանձնահատուկ վերաբերմունք են առաջացրել հայապահպան կարևորագույն ինստիտուտի՝ Հայ ազգային դպրոցի հանդեպ: Այդ է պատճառը, որ մասնավորապես հայկական սփյուռքում հայեցի կրթությունը համարվում է հայապահպանության առաջնային գործոն, և դարեր շարունակ հայկական գաղութներում ապրող հայերը առանձնակի նրբանկատությամբ են վերաբերվել դպրոցաշինությանն ու հայեցի կրթությանն ընդհանրապես: Դարեր ի վեր հայ եկեղեցին եղել է ժողովրդին համախմբողն ու ազգապահպանության կենսագործողը՝ իր վրա վերցրելով հայապահպանության կրթական և դաստիարակչական գործը: Այդպես է եղել և շարունակում է մնալ նաև սփյուռքի բազմաթիվ համայնքներում: Հայ եկեղեցիները սփյուռքի բազմաթիվ համայնքներում հիմնել են ամենօրյա և կիրակնօրյա բազմաթիվ դպրոցներ, որոնց շնորհիվ տասնյակ հազարավոր հայ պատանիներ ու երիտասարդներ չեն կորցրել ազգային դիմագիծը, դաստիարակվել են հայեցի ոգով, ծանոթացել են հայոց լեզվին, պատմությանն ու մշակույթին: Այլազգի միջավայրում էթնիկ փոքրամասնությունների միջմշակութային փոխհարաբերությունների մեջ, անշուշտ, կարևոր նշանակություն ունի հոգևոր գործոնը ուստի և հայ եկեղեցու դերը նույնպես անկյունաքարային է եղել սփյուռքի հայերի էթնիկ ինքնության պահպանման գործում: Դարեր շարունակ, ապրելով այլադավան միջավայրում, որտեղ բավականին դժվար էր ազգային ինքնության, կրոնի պահպանումը, հայերն առավել ամուր են կապվել իրենց

եկեղեցուն, հավատի միջոցով կարողացել են պահպանել հոգևոր կյանքի, ազգային մշակույթի ավանդները, իրենց գիրն ու լեզուն, ազգային առանձնահատկությունները: Պատահական չէ, որ հայ կյանքում ամենամեծ ընդգրկումը և ներկայացուցչությունը ունեցել են այն ժողովները, որոնք զումարվել են երկրի աշխարհիկ ու հոգևոր իշխանների մասնակցությամբ, և ինչպես մեր պատմիչներն են գրում, նման ժողովներն անվանվել են աշխարհաժողովներ: Հայոց եկեղեցու և հայրապետների՝ հայ կյանքում ունեցած բացառիկ դերը գիտակցել են և օտարները: Բնորոշ է Փավստոս Բուզանդի պատմության այն հատվածը, որում պատմվում է, թե ինչպես, երբ Վաղես կայսրը ցանկանում է ոչնչացնել Ներսես Մեծին, կայսեր խորհրդականները Վաղեսին ասում են, թե «Հայոց աշխարհում թագավորն ու նա մի հաշվի են»:

Դարեր ի վեր հայ իրականության մեջ հավատը և ազգությունը ոչ միայն նույնացած են եղել մեր ժողովրդի համար, այլև հայության կյանքում այս նույնացումը կատարել են նաև օտարները, որի խոսուն արտահայտությունն է և այն հանգամանքը, որ մեր պատմագրության մեջ մեկ օրինակ իսկ չի հիշատակվում, որ որևէ մեկ հայից կամ հայ ժողովրդի մեկ հատվածից պահանջվեր ուրանալ ազգությունը: Միակ պահանջը եղել է հավատը և եկեղեցին ուրանալը, որով, ինքնըստինքյան, կորսվել են և՛ լեզուն, և՛ ազգությունը: Նույն այս պատճառով է, որ լեզուն կորցրած հայերը եկեղեցու միջոցով պահել են ազգությունը, իսկ եկեղեցուց հեռացած և ոչ միայն կարճ ժամանակում ձուլվել է ուրիշ ազգերի հետ՝ կորցնելով իր ազգային ինքնությունը: Ինչպես գրում է Մաղաքիա պատրիարք Օրմանյանը. «Հայոց եկեղեցին եղած է այն միակ հոդակապը, որ Հայկա սերունդին ցրված մնացորդները կրցած է իրարմե անբակտելի պահել և իբրև մեկ ազգ պահպանել»: Թերևս հենց այս հանգամանքով է պայմանավորված որ բոլոր գաղթօջախներում, բոլոր ժամանակներում հայերի առաջին գործն է եղել հայկական եկեղեցու կառուցումը, որին էլ հաջորդել է դպրոցաշինությունը: Հայկական դպրոցներ բացելու և նրանց գործունեությունն անխափան կազմակերպելու առաքելությունը

մշտապես եղել է եկեղեցունը: Հենց դա է վկայում այն հանգամանքը, որ բոլոր հայկական առաջին դպրոցները բացվել են եկեղեցիներին կից և նրանց հովանավորությամբ: Սփյուռքում եկեղեցին ու դպրոցը կարծես միասնացած լինեն: Այսօր էլ սփյուռքում հայ եկեղեցին, որի համապարփակ գործունեության մեջ վճռորոշ ու կարևոր տեղ ունի կրթական գործը, բացառիկ ուշադրության ու հոգածության տակ է պահում հայկական դպրոցները և բոլոր հարցերում աջակից դառնում նրանց : Հայոց ցեղասպանությանը հաջորդած տարիներին աշխարհասփյուռ հայ գաղթօջախներում եկեղեցին շարունակել է մնալ իր զավակների կողքին՝դառնալով հայրենազրկված արևմտահայության համախմբման առանցքային դերակատարն ու սփյուռքահայության համայնքների կազմակերպիչը: Հայ Առաքելական եկեղեցու դպրոցաշեն և հայապահպան գործունեությունն առավել մեծ թափով սկսել է իրագործվել Մերձավոր Արևելքի երկրներում և հատկապես Լիբանանում ու Սիրիայում, որտեղ Մեծ եղեռնից հետո ապաստանել էին առավել մեծ թվով հայ գաղթականներ :

Այսօր աշխարհի ավելի քան 100 երկրներում բնակվում է շուրջ 7 մլն հայ, գործում են տասնյակ համահայկական ու հոգևոր, հարյուրավոր համայնքային ու հայրենակցական կառույցներ, լրատվամիջոցներ, շուրջ 1000 մեկօրյա և ամենօրյա դպրոցներ, գիտական ու կրթական հաստատություններ, մարզական ու մշակութային միություններ, բարեգործական ու հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Սա իրապես խոսում է այն մասին, որ աշխարհի յուրաքանչյուր ծայրում ապրող հայերը քաջ գիտակցել են ազգային ինքնագիտակցության կորստի և ձուլման անդառնալի հետևանքները, ուստի և հայեցի կրթության հարցը համարել են առաջնային՝ որևէ ռեսուրս չխնայելով դրա համար: Թերևս արդեն իսկ ձեռքբերում է, որ սփյուռքի մեր գաղթօջախները, տեսնելով, բռնագաղթ, ցեղասպանություն, հալածանքներ, այսօր առավել չափ համախմբված են, միասնական, եկեղեցուն, ազգային արժեքներին ու հայրենիքին նվիրված: Սփյուռքն ունի մարդկային ու ենթակառուցվածքային ահռելի ռեսուրս, ինչն էլ այն հենասյունը կարելի է համարել, որ

գլոբալացման մարտահրավերով հարուստ արդի շրջանում հայկական սփյուռքը չի կորցնի իր ազգային դիմագիծը: Սակայն սա չի նշանակում, որ կարիք չկա զարգանալու, կրթական բարեփոխումներ ու նոր կրթական ծրագրեր իրականացնելու, ընդլայնելու աշխարհով մեկ հայկական դպրոցների թվաքանակը, քանզի այսօրվա մատաղ սերունդն էլ իր ժամանակներին համահունչ սպառնալիքի տեսադաշտում է. գլոբալացման հետևանքով ազգային նկարագրի պահպանումը վտանգված է: Այս նպատակով դեռևս անցյալ դարի սկզբներից սփյուռքում գործունեություն են ծավալում կրթական-մշակութային, բարեգործական կազմակերպություններ, որոնց ենթակայության տակ ստեղծվել ու իրենց գործունեությունն են շարունակում մի շարք կրթամշակութային կառույցներ:

Այդպիսի կառույցներից էին Համազգային հայ կրթական և մշակութային միությունը , որը մշակութային-կրթական կազմակերպություն է՝ հիմնադրված 1928 թվականի մայիսի 28-ին Կահիրեում: Միությունը Հայ Յեղափոխական Դաշնակցության հովանու ներքո գործունեությունն է ծավալել՝ ի շահ հայկական մշակույթի, հայ դպրության, հաց լեզվին և ընդհանրապես հայ հոգեկան և իմացական արժեքների ճանաչման, զարգացման, տարածման և ժողովրդականացման համար: Միությունը 1930-ին Բեյրութում բացել է Հայ ճեմարանը, որը 1948-ից կոչվում է Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարան, 1974-ին Բեյրութում հիմնել է Հայագիտական բարձրագույն հիմնարկը, Ֆրանսիայի Մարսել քաղաքում 1980-ին հիմնադրել է Մարսելի կրթական կենտրոնը՝ մանկապարտեզով, նախակրթարանով, միջնակարգով և երկրորդականով, 1986-ին Սիդնեյում հիմնադրել է Համազգայինի Արշակ և Սոֆի Գոլստընն (Գալստյան) երկրորդական վարժարանը: Այս ամենօրյա վարժարաններից բացի, Միության մասնաճյուղերը պահում են նաև մեկօրյա դպրոցներ: 1990թ. Բեյրութում բացվել և մինչ այժմ գործում է Մելանքթոն և Հայկ Արսլանեան ճեմարանը: Այս միության կողմից Բեյրութում հիմնադրվել է Լևոն Շանթ մշակութային կենտրոնը, Թորոս Ռոսլին

կերպարվեստի ակադեմիան, Բարսեղ Կանաչյան երաժշտանոցը, ինչպես նաև երգի և բալետի դպրոցները: Նույնանման մշակութային կենտրոն է գործում Հալեպում (Սիրիա). Արամ Մանուկյանի անունը կրող մշակութային կենտրոնում գործում են Բարսեղ Կանաչյան երաժշտանոցը, Սարյան կերպարվեստի ակադեմիան, Զավարյան թատերախումբը, «Զվարթնոց» երգի-պարի համույթը: Գործելով ավելի քան 90 տարի՝ կրթական և մշակութային այս միությունն իր նպաստն է բերել սփյուռքում հայ կրթամշակութային կյանքի զարգացմանը:

Հայեցի կրթության գործում մեծ ավանդ ունի նաև Թեքեյան մշակութային միությունը, որը հիմնվել է 1947-ին, Բեյրութում: Գործելով Ռամկավար-ազատական կուսակցության հովանու ներքո՝Թեքեյան մշակութային միության նպատակն է եղել ամեն կերպ պահել ու պահպանել հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը, ստեղծել դպրոցներ՝ սփկուռքահայ փոքրիկների համար հասանելի դարձնելով հայոց լեզուն ու պատմությունը, մշակույթն ու հայկական արժեհամակարգը: Թեքեյան մշակութային միության աջակցությամբ գործում են երկու հայկական դպրոցներ՝ Բեյրութի Վահան Թեքեյան և Լոս Անջելեսի Արշակ Տիգրանյան դպրոցները: Միացյալ Նահանգներում բնակվող հայության առաջին կազմակերպություններից կարելի է առանձնացնել Հայկական միությունը, որը ստեղծվել է 1886 թվականին: Ամերիկահայության համար նույնպես գերխնդիր է ազգային օրակարգ ունենալը, ուստի և միության գլխավոր նպատակն էր Նյու Յորքի հայ համախմբումն ու ազգային ինքնության պահպանումը: Հենց այս տարիներին էլ ԱՄՆ-ում հայերը հիմք են դնում համայնքի համախմբման ու կանոնակարգման առաջին հիմքերը:

1890 թվականին հիմնադրվում է Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, 1895-ին իր գործունեությունն է ծավալում Հայ հեղափոխական դաշնակցության ԱՄՆ տեղական կազմակերպությունը: Ավելի ուշ՝ 1919-ին էլ հիմնվում է Ազգային ռամկավարական միությունը, որը 1921թ. Դառնում է

Ռամկավար ազատական կուսակցություն : Հետագա տարիներին հիմնվում են հայության այնպիսի հեղինակավոր կազմակերպություններ, ինչպիսիք են Հայ օգնության միություն կազմակերպությունը (Նյու Յորք, 1910թ.), Ամերիկայի հայ ազգային միությունը (Բոստոն, 1917թ.), Հայ դատի հանձնախումբը (Ուոթերբաուն, 1918թ.), Միացյալ Նահանգների մտավորականության գիտակրթական հերուժի համախմբման և ԱՄՆ հայությանը հայեցի կրթելու նպատակներով ձևավորված Ամերիկահայ ուսանողների միություն կրթական և բարեսիրական կազմակերպությունը (Նյու Յորք, 1910թ.) և այլն :

Ամերիկյան մեծաթիվ սփյուռքում այսօր էլ կարևորվում է հայեցի կրթությունը: Գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում գործում են հայրենակցական միություններ, համահայկական կազմակերպություններն իրենց մասնաճյուղերով՝ ՀԲԸՄ-ն (ԱՄՆ-ում հիմնվել է 1908 թ. Բոստոնում), ՀՕՄ-ը (հիմնվել է 1910 թ. Նյու Յորքում), ՀՕՖ-ը (ստեղծվել է 1988 թվականի երկրաշարժից անմիջապես հետո, Նյու Յորքում), Վարդանանց ասպետներ (ստեղծվել է 1916 թվականին Ֆիլադելֆիայում), Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, «Նոր սերունդ», Թեքեյան մշակութային միությունները, «Հայաստան» համահայկական հիմնադրամը, ՀՄԸՄ, ՀՄՄ, ՀԲԸՄ հայ երիտասարդաց միությունները, Հայ բժիշկների, ոսկերիչների, փաստաբանների, գրողների միությունները և մի շարք այլ կազմակերպություններ : Ներկայումս ԱՄՆ-ում գործում են ավելի քան 170 կրթօջախներ, 30-ից ավել ՋԼՄ-ներ, մոտ երեք տասնյակ հայագիտական կենտրոններ, ամբիոններ, դասընթացներ, բազմաթիվ մշակութային կենտրոններ, համայնքային կազմակերպություններ, միություններ, հայկական ռադիոհեռուստատեսային ժամեր և հեռուստաալիքներ: Կան հայկական գրատներ, հրատարակչություններ, գրախանութներ, հայկական հրապարակներ, պուրակներ, հուշարձաններ, խաչքարեր, «Հայաստան», «Արմենիա», «Արցախ», նաև անվանի հայերի անուններով փողոցներ, մայրուղիներ: Բոստոն քաղաքում է գտնվում Հայկական

ժառանգության այգին: Վստահաբար կարելի է փաստել, որ ինչպես սփյուռքի մյուս համայնքներում, այնպես էլ ԱՄՆ-ում հայկական դաստիրակության ու կրթության համար հայ ժողովուրդը ջանք ու եռանդ չի խնայել: Սա խոսում է այն փաստի մասին, որ սփյուռքում հայեցի կրթության ու ազգապահպանության համար կատարվել է հզոր ու համակարգված աշխատանք, թե՛ համահայկական կառույցների, թե՛ եկեղեցու կողմից: Հենց այդ համատեղ կառուցողական աշխատանքի շնորհիվ է, որ տասնամյակներ շարունակ ապրելով օտար հողում՝ հայը չի կորցրել իր դիմագիծն ու էթնիկ առանձնահատկությունները:

ԱՊՀ անդամ, Արևելյան և Արևմտյան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, Ավստրալիայում, որտեղ կան հայկական համայնքներ կրթամշակութային կյանքը նույնպես համայնքի կարևորագույն հիմնահարցերից է: Այս անհաշվելի երկրներում նույնպես գործում են բազմաթիվ կրթամշակութային օջախներ, որտեղ մատաղ սերունդը հնարավորություն ունի ստանալ հայեցի կրթություն և հնարավորինս մոտ լինել հայկական միջավայրին: Անշուշտ, դպրոցներն ու մշակութային հաստատությունները իրենց հայրենանվեր գործն են բերում ոչ միայն մատաղ սերնդի կրթությանը, այլև համայնքի համար հանդիսանում են համախմբող, առաջնորդող հարթակներ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

Սկսած 1991թվականից՝ Հայաստանի քաղաքական անկախացումից հետո, հայկական սփյուռքի հետ հարաբերությունների զարգացման նոր հնարավորություններ ստեղծվեցին: Անկախության տարիներին ստեղծվեցին նաև մի շարք պետական գործիքներ և ձևաչափեր, որոնք պետք է իրականացնեին և համակարգեին ՀՀ պաշտոնական քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ: Սակայն հարկ է նշել, որ անկախության քառորդդարյա գոյության ընթացքում Հայաստան-սփյուռք հարաբերությունները չընթացան կայուն զարգացման հետագծով: Հայկական Սփյուռքի դերն ու նշանակությունը, ինչպես նաև ՀՀ-սփյուռք

փոխհարաբերությունները բարձրացվեցին սահմանադրական աստիճանի և իրենց արժևորումը գտան 2005 թ. նոյեմբերի 27-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ՀՀ փոփոխված Սահմանադրության շրջանակներում: ՀՀ Սահմանադրության մեջ հայկական սփյուռքի վերաբերյալ ամրագրվեց հետևյալը. «Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է Հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը : Կարևորվում էին նաև ՀՀ զարգացման տեսանկյունից Սփյուռքի տնտեսական և մշակութային նշանակությունը, ազգային-մշակութային արժեքների պահպանումը, դրանց զարգացումն ու տարածումը : Ընդգծվում էր Հայաստանյանց առաքելական սուրբ եկեղեցու կարևոր առաքելությունը հայության համախմբման համատեքստում: Այս ամենը, անշուշտ, նպաստեց ՀՀ-ում Սփյուռքի նկատմամբ քաղաքականություն իրականացնող պետական մարմնի ստեղծմանը: Հայապահպանության նպատակով Հայաստանում բազմիցս կազմակերպվում են սփյուռքահայ ուսուցիչների, կրթական ու համայնքային գործիչների ամենամյա ամառային դպրոցներ, վերապատրաստումներ: Սփյուռքյան համայնքներին տրամադրվում են մեծաքանակ գրականություն, նյութական ու մեթոդական ծավալուն : Երևանի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող «Սփյուռք ամառային դպրոց» ծրագիրը ներառում է դասընթացներ՝ հետևյալ ուղղություններով՝

- Հայոց լեզվի (արևելահայերեն և արևմտահայերեն) արագացված ուսուցում:
- Սփյուռքի հայկական կրթօջախների ուսուցիչների և կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում:
- Լրագրողների վերապատրաստում:

- Երիտասարդ առաջնորդների և համայնքային գործի կազմակերպիչների վերապատրաստման դասընթաց:
- Ազգային երգի խմբավարների և պարուսույցների վարպետության դասընթացներ:

Ծրագրի նպատակն է հայրենիք-սփյուռք հուսալի և արդյունավետ կամուրջների ստեղծումն ու ամրապնդումը, հայոց լեզվի իմացության ու կիրառման խրախուսումը, կրթական, մշակութային ծրագրերի և հայագիտական օջախների գործունեությանը օժանդակումը, համայնքներում առկա ներուժի հաշվառումն ու համախմբումը, համահայկական ծրագրերում դրանց ներգրավման աջակցությունը: Ծրագիրը նպաստում է երիտասարդների շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի, հայկական կրթօջախների ու ուսուցիչների, կրթական գործի պատասխանատուների, ազգային երգի ու պարի խմբերի ղեկավարների որակավորման բարձրացմանը, սփյուռքի ՁԼՄ-ների, երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը, ինչպես նաև համայնքների ինքնակազմակերպման ջանքերի ակտիվացմանը: Այն տարբեր երկրներից եկած մեր հայրենակիցներին միմյանց հետ ծանոթանալու, փորձի փոխանակման, նորաբարությունները յուրացնելու, Հայաստանը տեսնելու, կապեր հաստատելու հնարավորություն է տալիս:

Դիտարկենք մի քանի նախագծեր, որոնք իրականացվում են ներկայումս:

1/ Ներկայումս սփյուռքում գործող հայկական կրթօջախների մանկավարժների վերապատրաստման ծրագիրը շարունակվում է: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 2022 թ. շարունակում է սփյուռքում գործող հայկական և հայկական բաղադրիչով ուսումնական հաստատություններում (պետական և ոչ պետական վարժարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, լրացուցիչ կրթության հաստատություններ, մեկօրյա կրթօջախներ, մշակութային կենտրոններ և այլն) մանկավարժների վերապատրաստման ծրագիրը՝

համակցված (հիբրիդային) ձևաչափով: Վերապատրաստումն ընթանում է ըստ դպրոցների տեսակների և դասավանդվող առարկաների առանձնացված ուսումնական խմբերով՝ յուրաքանչյուրը 120 դասաժամ:

ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները, Ե., 2013, էջ 24, 165-166, 333:

Եզրակացություն

Այդուհանդերձ, կարելի է պնդել, որ սփյուռքի լինելիության հիմնական մեխը հենց հայկական դպրոցն է: Հայ ազգային ինքնության պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու և դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից դարձնելու ձգտումն սփյուռքի բոլոր դպրոցների համար հավասարազոր է եղել հայրենիքը պաշտպանելու գաղափարի հետ: Դարեր շարունակ պետականությունից զուրկ ապրելը, օտար տիրապետողների ծանր լուծը և ազգային ինքնության ու գենի կորստի մշտական սպառնալիքն հայ ժողովրդի ազգային գիտակցության մեջ առանձնահատուկ վերաբերմունք են առաջացրել հայապահպան կարևորագույն ինստիտուտի՝ ազգային դպրոցի հանդեպ: Այդ է պատճառը, որ հայկական սփյուռքում հայեցի կրթությունը համարվում է հայապահպանության առաջնային գործոն, և դարեր շարունակ հայկական գաղութներում ապրող հայերը առանձնակի պատասխանատվությամբ են վերաբերվել դպրոցաշինությանն ու հայեցի կրթությանն ընդհանրապես:

Այսպիսով, կարծում ենք, որ գլոբալացման ներկա ժամանակաշրջանը իր մարտահրավերներն է առաջադրում փոքր ազգերին: Այդ մարտահրավերներ առավել տեսանելի ու շոշափելի են հայ ժողովրդի պարագայում, քանզի ահռելի է օտարության մեջ ապրող մեր հայրենակիցների թիվը: Այս համատեքստում հարկ է, որ առավել դիպուկ ու գործնական դրվի հայկական սփյուռքում հայեցի կրթության ու դաստիարակության հիմնահարցը, խորքային վերլուծվեն հայեցի կրթության ներկա վիճակը, առկա հիմնախնդիրները և դրանց կառավարման մեխանիզմները: Հարկ է, որ սփյուռքյան հայկական կրթամշակութային օջախները, համայնքային նշանակության և եկեղեցական ենթակառուցվածքները, հայագիտական կենտրոններն առավել գործնական

քայլեր կատարեն՝ համայնքը համախմբելու, հայրենիքի հետ համագործակցությունը սերտացնելու ուղղությամբ:

Իր հերթին՝ ՀՀ-ում նույնպես պետք է առավել մեծացնեն սփյուռքի կրթամշակութային հաստատությունների հետ համագործակցության ծավալները, համատեղ իրականացնեն կրթամշակութային ծրագրեր՝ նպատակ ունենալով կամրջել օտար ափերում ապրող մեր հայրենակիցներին իրենց հայրենիքի հետ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, սույն հետազոտությունը թույլ տվեց մեզ որոշակի պատկերացում կազմել օտար ափերում հայեցի կրթության դերի, նշանակության, որակի և մի շարք այլ հարցերի շուրջ: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ.

- Նշված ուսումնական հաստատությունը, մանկավարժական կոլեկտիվն իր բոլոր ջանքերն ուղղում է, որ օտարության մեջ մեծացող հայ սերունդը ամուր կապված լինի իր մայրենի լեզվին, պատմությանը, ավանդույթներին ու մշակույթին:
- Ուսուցիչները ջանք ու եռանդ չեն խնայում հայկականության տարածման, աշակերտներին հայեցի կրթություն ու դաստիարակության անկյունաքարային գործում:
- Աշակերտների հիմնական մասը սիրում ու կարոտում է իր հայրենիքը, մեծ ոգևորությամբ է խոսում Հայաստանի, դրա տեսարժան վայրերի և մարդկանց մասին:
- Չնայած կան որոշակի դժվարություններ՝ սակայն ուսումնական հաստատությունը ամեն կերպ փորձում է Հայաստանի ներկայությունն ապահովել դպրոցում, սերտորեն համագործակցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության և մի շարք այլ կրթամշակութային կազմակերպությունների, անհատների հետ:

- Կալկաթայի «Հայոց մարդասիրական » ճեմարանի գերխնդիրն է հայրենիքի գաղափարը վառ պահել սովորողների սրտերում, մտքերում՝ այդպիսով լուծելով հայ մնալու, հայերեն խոսելու, հայերեն ապրելու ազգապահպանական հիմնախնդիրները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հր. Աճառյան, «Հայ գաղթականության պատմություն», Երևան, 2002:
2. Հ. Մելիքսեթյան, «Հայրենիք–սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980, Երևան, 1985:
3. Վ. Բայբուրդյան, «Իրանի պատմություն» (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:
4. «Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու», Ա. Զաքարյան, «Հնդկաստանի հայ համայնքը, պատմամշակութային անդրադարձ», Երևան, 2010:
5. Հ. Մանուչարյան, «Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերակիչ հատկությունները», Երևան, 1988:
6. Մ. Լալայան, «Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ», Երևան, 2008:
7. Լ. Մատինյան, «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, «Հայ ազգային գաղափարախոսության վերանայումը որպես ժամանակի օբյեկտիվ պահանջ», Երևան, 2014:

8. Ս. Սրապիոնյան, «1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերի եղերական պատկերները» Ավ. Ահարոնյանի «Իմ գիրքը» երկում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Բանասիրություն», 2010:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հարցաթերթիկ ուսուցիչների համար

1. Ինչպե՞ս եք գնահատում հայեցի կրթության մակարդակը Ձեր դպրոցում:

ԲԱՐՁՐ ՄԻՋԻՆ ՑԱԾՐ

2. Արդյոք Ձեր աշակերտների համար հայեցի կրթությունն ու դաստիարակությունն առաջատար դիրք ունի:

Այո Ոչ այնքան

3. Մասնակցե՞լ եք ՀՀ ԿԳՄՍ Նախարարության կողմից կազմակերպվող սփյուռքում գործող հայկական կրթօջախների մանկավարժների վերապատրաստման ծրագիրերին:

Այո Ոչ

4.Ի՞նչ դժվարություններ ունեք հայապահպանման, հայեցի կրթության ու դաստիարակության գործում, հիմնավորե՛ք Ձեր պատասխանը:

_____

_____

_____

5.Համագործակցու՞մ եք ՀՀ- ում Ձեր կոլեգաների հետ տարաբնույթ կրթամշակութային ծրագրերի շրջանակներում:

Այո Ոչ

_____

_____

_____

_____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հարցաթերթիկ ուսուցիչների համար

1. Ինչպե՞ս կգնահատես հայերենի գրավոր և բանավոր իմացությունդ:

ԲԱՐՁՐ ՄԻՋԻՆ ՑԱԾՐ

2. Հայաստանում եղե՞լ ես, ի՞նչն է քեզ առավել հետաքրքրել:

_____

_____

_____

_____

3. Նշի՛ր քո նախընտրելի տարբերակը:

- Հայոց լեզու և գրականություն
- Հայոց պատմություն
- Հայկական ավանդույթներ
- Հայկական երաժշտություն
- Հայկական կինոմատոգրաֆ

4.Ունե՞ս դժվարություններ հայկական կրթություն ստանալիս:

Այո Ոչ

5.Հայաստանում ունե՞ս ընկերներ, պատմիր նրանց մասին:

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային մակարդակ

- Իրականացնել հետազոտություններ էթնիկ փոքրամասնությունների իրավունքներին վերաբերվող միջազգային կոնվենցիաների ու դրանց ազդեցությունը հայկական կրթօջախների արդյունավետ աշխատանքի վրա:

- Եվրոպական երկրներում դիտարկել Եվրոպայի Խորհրդի Ազգային փոքրամասնություններին վերաբերող շրջանակային կոնվենցիայի կիրարկումը այդ տարածաշրջանում գտնվող երկրների հայ համայնքների հայապահպան գործունեությանը նպաստելու համար:

Ազգային մակարդակ

- Հիմնել շարունակական գործող ու ինտերակտիվ հարթակ ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ու սփյուռքահայ գաղթօջախների միջև՝ խթանելով հայապահպանության ծրագրերը:

- Արդունավետորեն խթանել ու օգտագործել այնպիսի ծրագրեր, որոնք ավելի ամուր կկապեն սփյուռքը

Հայաստանի հետ: Նման ծրագրեր են առաջարկում Հայ կամավորների միությունը իր՝ Birthright

ամենամյա ծրագրով, ՀԲԸՄ ամառային ճամբարները և այլն:

- Ստեղծել սփյուռքի հայկական կրթօջախներին աջակցող հիմնադրամ՝ ապահովելով թափանցիկության

բոլոր մեխանիզմները:

Համայնքային մակարդակ

- Բարձրացնել հայկական կրթօջախների վարչարարության ու կառավարման թափանցիկությունը, որը կօգնի

հավելյալ ֆոնդեր հայթայթել համընդհանուր նպատակի համար:

- Ներգրավել հյուրընկալ պետության ֆինանսական ու այլ ռեսուրսներ, որոնք իր նպատակին ծառայելու

հետ մեկտեղ կխթանի նաև հայապահպանությունը: